

պառաւի հեծկլտանքը և գանգատը իւր բազդից, որ ծերութեան հասակում հալածում էր նորան, նորնպէս առանց արցունքի չէինք կարողանում լսել, թէ ինչպէս նա օդնութեան էր կանչում ամոսնուն, պատկառելի թրուատ հալրիկին, որ մեռել էր տասը տարի առաջ, և բոլոր ազգականներին, որոնց ոսկրները վաղուց արդէն հանգչսւմ էին Դօղէնչէմի հանգտարանում։ Երբ միտս է գալիս նորա վիշտը՝ ալժմ էլ գողս բռնում է։

Մուրճը շարունակում էր իւր գործը. կարասին, հին պակին, որ կախուած էր կատէրինի-իմ հանգուցեալ խեղճ կնոջս մահճի մօտ, պապի և տատի պատկերները, Ռիկարի ձեռքով նկարուած—այն անձի, որ ամենագեղեցիկ ցուցանակներն է նկարել կարլ Փ.—ի ժամանակ, ալնուհետեւ երկու սրոկիչներ (օրէնած ջրի) և հին խաչելութիւնը ծալքի խորքում, Վալդ-Մարիի դղրոցը և մեծ կաղնէ պահարանը, որ տակալին մեր պապ Դիւշէլին էր պատկանում,—ալս բոլոր հին իրերը, որոնք վիշեցնում էին մեր նախնիքներին և մեր անցեալ կենցաղը, ալս ամենը բարձեցինք և ուղարկեցինք. մենք ստիպուած եղանք մեր սեպհական ձեռքով աւերել մեր կեանքը։

Սագօն անկիւնից անկիւն անցուղարձ էր անում, զարմացած ալս աղմուկի վերալ, կալասը հարցրեց։

— Ի՞նչ էինք արել, որ գողի պէս պէտք է աղատուէինք...»

Լաւ կլինէր որ երբէք շմտաբերէի և չսկսէի ալս պատմութիւնը, մարդկալին ցեղի ալս նախատինքն ու քրիստոնեաների անարգանքը, որոնք աւերեցին իրանց ալն մերձաւորներին, ուրեք չէին ցանկանում խոնարհել նոցա հպարտութեան տոջե։

Թալց. որովհետեւ արդէն սկսել եմ պատմել, ուստի և պէտք է շարունակեմ։

Բոլոր ասածներս ոչինչ էին համեմատելով նորա հետ, որ դէպ եղաւ տեսնել աւելի ուշ։

Երբ բարձրահասակ Շտարկը եկաւ և կարասն դարսեցինք սալլակի վերալ, հարկաւոր էր վերջապէս տատին խընդրել «որ սենեկից զուրս գալ» Տեսնելով որ ամեն ինչ պատրաստ է որպէս զի ճանապարհ ընկնենք, նա երեսն ի վալր ընկաւ գետնին ու աղաղակեց։

— Ֆրէդերիկ, Ֆրէդերիկ... սպանեցէք ինձ... մահացրէք...
բաց մի հանեք աստեղից... թողէք որ ընդ միշտ ննջեմ ձիւ-
նի տակ մեր փոքրիկ պարտիզում:

Ալդ միջոցին ծարժ, ինքս էլ ցանկանում էի մեռնել...

Արինը սառեց իմ երակներում և ալժմ էլ չորս տա-
րի անցնելուց իտոոլ, ես անդօր եմ պատմել քեզ, թէ ինչ-
պէս նստեցրինք խեղճ տատին սալլակի մէջ, դարմանէ ներք-
նակների վերալ, և տարան ձեան տարափի տակ:

¶.

Զիւնը, վաղ առաւօտուանից՝ գալով՝ նստել էր բաւական
բարձր, Սալլակն ընթանում էր դանդաղ. Շտարկը, առջևից
դնալով, քաշում էր իր խղճուկ ձիւրը, հակոնելով և մտրա-
կելով, կալասը փոքր ինչ հետու քշում էր կովերն ու խողերը:
Ռազօն օգնում էր նորան. Վարդ-Մարին և ես հետեւում էինք
նորան գիսիկոր, իսկ ետեւ եղեինների մէջ մնաց մեր տնակը,
ամբողջովին ձիւնի մէջ ծածկուած:

Միւս օրը տակաւին պիտի փոխադրէինք փալտը, խոտն
ու գետնախնձորը. ուստի դուանը փականք դրի և բանալին
պահեցի գրպանում:

Գիշերը ուշ հասանք նկէլի մօտ ևս տատին գրկեցի և
տարալ վերև սենեակը, ուր կատէլը փառաւար կռակ էր վա-
ռել, Վարդ-Մարին և կատէլը համբուրուեցան. նոքա միննոյն
ուսումնարանումն էին սովորել և առաջին անգամ ճաշակուել
ֆելսքերդում: Կատէլը լաց եղաւ Վարդ-Մարին, լուզմունքից
գունատուած, ձախ չէր հանում: Նոքա մտան սենեակը, իսկ
մինչև Շտարկը կալասի և երկու երեք դրացիների հետ կա-
րասին սալլից ցած բերելով՝ տեղաւորեցին որոշուած տեղը,
ես ներս մտալ դահլիճ մի րոպէ հանգիստ առնելու կրակի
մօտ և մի բաժակ գինի խմելու. գործ շինել չէի կարողանում,
ոլժերս նուազել էին բոլորովին.

Առաջին գիշերը, որ անցկացրինք Գրառփտալում, այն
սենեակներում, ուր ամեն կողմից փլում էր քամին, շատ
ձանձրակի էր: Վառարանը ճխում էր տատը հազում էր ան-
կողնում. Վարդ-Մարին, չնակելով ցրտին, վեր կացաւ որ մի
բան խմէ. լուսամուտի մանր ապակիները դողդողում էին քա-
մու իւրաքանչիւր շաշիւնից, որ իւր հետ ձիւն էր ներս ա-

ծում սենեակը, Ալո, չափաղանց տանջուեցինք ալդ առաջին գիշերը, Ես անզօր էի աչքս փակելու և մտածում էի.

«Անհնար է արտեղ ապրել, Երկու շաբաթ չի անցնի, և անշուշտ ամենքս կմեռնենք. պէտք է աւելի առաջ գնանք:

Քալց ուր գնանք... Ո՞ր կողմա:

Ամբողջ Էլլասն ու Լոտարինդը բռնուած էր գերմանացիներով, ճանապարհները ծածկուած էին թնդանօթներով ու սպլերով. ոչ թէ միայն վրանաճիւղերը, ալ բոլոր ախոռներն էլ լիքն էին. Ալս մտածմունքներից մազերս ճերմակեց. երանի թէ վիզս կոտրուէր ալն ժամանակ, երբ մեր տան չէմքից ոտս դուրս դրի, նոյնը կուզէի և տատիս և դստերս համար:

Բարեբաղդաբար Ժան Մէրլէնը միւս առաւօտը վաղեկաւ Նա պատմեց, թէ մեր պատամիանը տարել էր Փօրստմէլստրին, կարասին փոխադրել էր Ֆէլսբէրդ, և նորա մալր պառաւ Մարդրէդէլը արդէն հանգիստ տաքանում էր վառարանի մօտ, Դանիէլ հօրեղբօր տանը:

Ալս ամենը պատմեց մեզ ուրախ ուրախ, առաջ ՎարդՄարիին համբուրելով և ապա ողջոն տալով տատին:

Նորա սոսկ տեսքը հանգստացրեց ինձ. երբ գանգատում էի ցրտից, ծուխից ու վատ անցկացրած դիշերից, նա աղաղակեց.

—Ալո... շատ լաւ հասկանում եմ, թէ ինչքան դժուար է ձեզ համար. ես մտածել եմ ալդ մասին, ուստի և շտապեցի եկաւ: Ձեր տարիքում ծանր է սովոր կեանքը թողնել և ուրիշ մարդկանց մօտ ապրել. զուք ուղղակի լուսահատութեան մէջ էք. Ալսպիսի դէպքերում պէտք է մի բանով զբաղուել. Ահա անտառի տանս բանալին և դնահատական գիրքը. ցուցակն ու մուրճը ձեզ մօտ է. Նիթէ ձեր տեղ լինէի, գիտէք ինչ կանչի: Ալս բոլորը կտանէի պ. տեսչին, մանաւանդ որ Ցօրն շտադի Փօրստմէլստրը կարող է ալդ ամենը ձեղանից պահանջնել և մինչև անգամ ստիպել որ իրան տաք: Որչափ շուտ չանձնէք պ. Լարօշին, ալնքան ոչ ոք չի վստահանալ բան ասել: Մինչև կվերադառնաք, ՎարդՄարին լուսամուտներն ու լատակը կլուանակ, Կալասն ու Շտարկը կերթան փալուը, խոտըն ու գետնախնձորը բերելու, իսկ ես կարասին կտեղաւորեմ և ամեն բան կարգի կցցեմ:

Անպէս խելօք էր զատում, որ ես հետեւցի նորա խորհրդին: Իջանք պանդոկի դահլիճը ե-իմ սովորութեան հակա-

ուակ—միասին մի մի գաւաթ օղի խմեցինք. ապա ցուցակը խալաթիս տակ բռնած, մուրճը զրպանումս և մատեանը ձեռիս՝ դուրս զնացի. Այս իմ վերջին ճանապարհորդութիւնս էր պաշտօնական զործով ալդ կողմերը,

Ֆրօմիւլ մօտ ջուրը սառել էր. աշխատանքը դադարած էր ջրաղացում և սղոցելու գործարանում. Երեկուանից ինձանից կետով ոչ ոք չէր անցել ալդ ճանապարհով. ամեն ինչ կարծես ամալացել էր. երեք ժամուալ ճանապարհի վերաէ ոչ մի կենդանի էակ չտեսալ.

Ալդ միջոցին միտս եկան ածխակոլտի ծուխը, անտառի կարտած տեղերում աշխատող փալտատների կացնի ձակնը, որոնք փալտը դարսում էին ճանապարհի երկարութեամբ, նոյն իսկ խիստ ձմրան ժամանակ,—այս ամենն նախկին ուրախ գործական կեանքը, որ կերակրում ու կենդանութիւն էր տալիս ամենափոքրիկ գիւղին անդամ, ես մտածում էի, որ կախելու արժանի էին այն աւաղակները, որոնք ընդունակ էին խանդարել մի աւդափիսի խաղաղ կեանք, որ ինչ է ապօրինի կերպով օգտուեն ուրիշի աշխատանքի պառուղներից. Ժամանակ առ ժամանակ լուռեթեան մէջ անցնում էր իմ վրալից բագէն իւր լան թերով և ճանկերը հաւաքած. նորա թափանցիկ ձալնի վերալ՝ ես մտածում էի.

Ահա պրուսացիները... ներկալում նոքա ամեն բան լափում են, նոքա իրանց ճանկերն իջեցրել են բոլոր զերմանացիների վերալ. զրել են նոցա մօտ իրանց սպաներին, որոնք զեկավարում են նոցա. աշխատելու փոխարէն զերմանացիք իրանց վերջին լիտրդը ծախսում են պատերազմի վերալ, իսկ պրուսացիները իրանց կտուցն ու ճանկերը չեն հեռացնում նոցա ճարպից. պրուսացիները փետտում են նոցա, իսկ նոքա պաշտպանուել չեն կարողանում. Վակ մեղ ամենիս Ազնիւ պրուսացիները կլանեն մեղ ամենիս, իսկ մեղ հետ էլ թէ բադէնցիներին, թէ բաւարացիներին, թէ վիւրտէմբէրգցիներին և թէ հէսսէնցիներինո.

Ահա ինչ տխուր մտքեր էին անցնում իմ զլխով.

Առաւօտը տասը ժամին մօտ ելալ հին ամրոցի պատնէշի վերալ, որ անուշագիր էր թողնուած նոյն իսկ պատերազմի սկզբից. ապա, իջնելով արուարձանի փողոցը, մօտեցալ պ. տեսչի տանը, բայց գրասենեակի դուռը հաշտի ձախ կողմրց փակ էր. ի զուր զւնգեցի ես, փորձեցի բանալ—պատասխան

տուող չեղաւ։ Կամեցալ դուրս գալ հարեաններից մէկին հարց-նելու թէ ինչ է պահտահել պ. Լարօշին, երբ լանկարծ դուռը վերևից բացուեց, և ինքը պ. տեսուչը, խալաթով երևաց սան-դուխքի վերալ։

ԱԱ.

—Ո՞վ է—հարցրեց պ. Լարօշը, չճանաչելով ինձ կլոր գլխարկիս տակ։

—Ես եմ, պ. տեսուչ։

—Ա՛յս, դուք, Ֆրէդերիկ հալրիկ, —ասաց նա ուրախա-ցած։ —Դիհ, վերև եկէք. շաւու վերև եկէք։ Ցնեցիք ամենքը գնացել են, մենակ եմ մնացել. ճաշ «Գրանն» պտնդոկից են մերում Ներս եկէք, ներս եկէք…

Մտանք առաջին լարիի մի փոքր, շատ մաքուր սենեակ. վառարանը թէժ ծխում էր։ Բազկաթոռը մօտ քաշեց ինձ հա-մառ, նստեց գրքերով լի սեղանի առաջ և ասաց.

—Նստեցիք, Ֆրէդերիկ հալրիկ։

Ես նստեցի և սկսեցինք խօսել մեր գործերի մասին. Պատմեցի, թէ ինչպէս ներկալացանք Փօրսամէլստորին. բայց երևաց, որ նա արդէն գիտէր թէ ալդ և թէ շատ ուրիշ բան։

—Շատ ուրախ եմ,—ասաց նա, որ մեր բոլոր պահա-պանները, բացի խեղճ Խէննից, որ վեց երեխալի հալր է, ի-դրանց պարտաւորութեանց հաւատարիմ են մնացել. իսկ ձեր և ձեր փեսալ ժամ Մէրլէնի մասին երբէք կասկած չեմ ունեցել։

Հարց ու փորձ անելով մեր գործերի մասին և վերցնելով ինձանից ցուցակն ու մուրճը, ալդ ամենը դարսեց պահարա-նում և ասաց, որ բոլոր թղթերն արդէն ուղարկել է և սո-րանք էլ կուղարկէ ետեից։ Նա ինձ հարցրեց, թէ որ և է բանի կարիք ունինք արդեօք. Պատասխանեցի, թէ տակաւին 300 ֆրանկ ունիմ, որ լեռ եմ ձգել մի փոքրիկ տափ առնե-լու, ալդուն մօտիկ, և թէ ալդ գումարը կբաւականանալ։

—Աւելի լաւ, ասաց նա։ —Դուք գիտէք, Ֆրէդերիկ հալ-րիկ, որ իմ քսակս ձեր տրամադրութեան տակ է. դա ներ-կալում շատ էլ ստուար չէ. ալժմ ամենքս պէտք է տնտեսա-քար վարուենք, վասն զի Աստծուն միայն լալանի է, թէ ինչ-քան ալլ ես կերակրի պատերազմը. բայց եթէ որքան և իցէ պէտք լինի ձեզ…

Աս նորից շնորհակալութիւն լարտնեցի.

Մենք խօսակցում էինք ինչպէս վաղեմի բարեկամներ-նա մէնչե իսկ ծխախոտ առաջարկեց ինձ իւր տուփից. բայց ևս մերժեցին. Ազա ծխամորչ առաջարկեց. Ազ բոլորը մանրա-մասնութիւնները պատմում եմ նորա համար, որ հասկանաս, թէ ինչ արժանաւոր մարդ էր մեր տեսուչը.

Նա պատմեց, թէ պատելաղմ դեռ չէ վերջացել. թէ մեր կանոնաւոր զօրքը խմբերով անձնատուր է լինում, և ա-մենքը—մարշալից մինչե լետին տասնապետը—թշնամիների-ձեռքն են ընկել. Զլուած մի զէպք ոչ միայն Ֆրանսիալի, ալ նոյն իսկ որ և է մի երկրի պատմութեան հէնց սկզբից. Այս բանը շատ էր վշտացնում և լուզում նորան. Երկուակի-աչքերն էլ արտասու քով լցուեցան:

Այնուետև պատմեց, թէ Փարիզը ամուր է պահում, որ Պարիզի մեծանոցի բնակիչները երբէք ալդ ասսիճան քաջու-թիւն և սէր չեն ցոլց տուել զէպի հալրենիքը. թէ Օրէշանի մօտ կաղմակերպում է մեծ, ուժեղ, թէպէտ և անփորձ մի-քանակ, որից շատ բան են սպասում. թէ Սեղանից լետ հա-սարակապետութեան հրատարակելը նման է նորան, ինչպէս գիւղացիներն երբեմն դիմում են բժշկին, երբ հիւանդն արդէն մահու տագնապի մէջ է, և թէ անուամենախիւ ալդ հասա-րակապետութիւնը պէտք է իւր վերալ առնէր մի շարք դառն անցքերի ծանրութիւնը, որոնց պատճառն ինքը չէր, այն ինչ մեզ պատերազմի քաշող մարդիկ հեռացել են արտասահման: Ազա տեսուչը պատմեց, թէ շարժման զլուխ է անցել մի ե-ռանդուն մարդ, Գամբէտտան, ժամանակաւոր կառավարու-թեան անդուն մարդ, թէ նա հրաւէր է կարդում անխտիր բոլոր Փրանսիացիներին, որոնք ընդունակ են զէնք կրելու, և թէ եթէ պատերազմը էլի մի քանի ամիս տևէ, դերմանացիները չեն դիմանալ. թէ նոցա բոլոր տղամարդիկ զէնք են կրում, իսկ նոցա երկիրը, գործարանները, արդինաբերութիւնը ա-մենը բարձի թողի են արած. զաշտերը մնացել են անմշակ և չցանած: և կանալք, երեխաներ, ամբողջ ժողովուրդը սո-վամահ կլինի:

Վերջը, Ճօրժ, համողուեցանք որ այս ասածները ստու-էին. սպանուած պահեստի զինուորների մօտ զտնուած բոլոր նամակներից իմացում էր, որ զարհուրելի չքաւորութիւն էր-տիրում Գերմանիալում:

Պ. Լարօշի ասածները կենդանացրին իմ լուսերս։ Նա խոստացաւ միջնորդել իմ հրաժարականիս մասին, երբ միայն հնարաւոր կլինէր, և մի ժամին մօտ հեռացալ նորանից գրեթէ հանգստացած։ Նա սեղմեց ձեռքս և ձալն տուեց ետևիցս.

—Մի վրդովուէք, Ֆրէդերիկ հալրիկ. մենք դեռ լաւ ուր կարող ենք տեսնել:

Բոլորովին փոխուած հեռացալ նորա մօտից և առանց շտապելու հասալ Գրառուֆտալ, ուր ինձ սպասում էր մի անակնկալ ուրախութիւն։

Ի՞՞.

Ժան Մէրլէնը ամեն ինչ կարգի էր դրել։ Դռների ու լուսամուտների բոլոր ճեղքերը պնդացրել. լատակը լուսացուած էր, կարասին դասաւորած, պատկերները պատերից կախուած մօտաւորապէս ալնպէս, ինչպէս մեր անտառի տանն էին կախուած, Դուրսը շատ ցուրտ էր. վառարանը, որ մաքրել էր ժանը, լաւ էր տաքացնում. տատը նորա մօտ հին բազկաթուարի մէջ տաքանում էր և նալում բացին, որ լուս էր տալիս ամբողջ սենեկին, Վարդ-Մարին թեները կշտած աշխատում էր և ուրախացաւ երբ տեսաւ որ ես զո՞ն եմ, ժան Մէրլէնը ծիսամորչը բերանին և աչքերը չուած նալում էր ինձ վերալ, կարծես թէ ասելով։

—Կ՞ո՞նչ էք մտածում ալս ամենի մասին, Ֆրէդերիկ հալրիկ. Միթէ դեռ էլի ցուրտ է սենեակում։ Ամեն բան մաքրուած չէ տակաւին և տեղերը դարսած։ Ես ու Վարդ-Մարին կարդի բերինք ալս ամենը։

Իսկ ես, տեսնելով ալս բոլորը, ասացի նոցա.

—Բոլորը լաւ է... Տամաք տեղ է... Ալժմ տեսնում եմ, որ կարաղ ենք մնալ ալստեղ... շատ փառաւոր ջանէլներ էք։ Ալս բանը շատ զուր եկաւ նոցա։

Սեղանը գցեցին. Վարդ-Մարին համեղ շի էր եփել առ պիստից. գիրմանացիք բոլոր թարմ միսը լափշտակել էին, և մենք ուրափի էինք, որ գէթ ապխտածը մնացել էր, Բարեբաղդ դաբար գետնախնձոր, կաղամք և սև բողկ բաւական ունէինք, որ կաղմում էր մեր ապրուտի գլխաւոր միջոցը։

Ընթրեցինք. ապա ես պատմեցի հասարակութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները, որ հաղորդել էր ինձ պ. տեսուչը։ Ուքա անդրանիկ դրական նորութիւններն

էին Ֆրանսիակի մասին, որ մենք իմացանք, և գիտես թէ ինչ ուշադրութեամբ էին լսում նոքա ամենքն ինձ:

Ժան Մէրլէնի աչքերը փալլում էին, երբ խօսում էի Լուարի ապագայ ճակատամարտների մասին:

—Ա՛, հրատէր են կարդում ֆրանսիացիներին, հին զի՞նուորներին: Ուրեմնուուզում են պաշտպանուել:

Ես ոգևորուած աղաղակեցի:

—Պաշտպանուելու... ալո՞ պաշտպանուել, Պ. տեսուչն ասաց, որ եթէ մի քանի ամիս էլ տեէ, գերմանացիների բանը վատ կլինի:

Ժան Մէրլէնը բեղերը ուլորեց, կարծես ուզում էր բան ասել, բայց Վարդ-Մարիին նաևելով, որ ըստ ոսվորականին լսում էր մեղ անմռունչ, լուրջ դէմքով նորից սկսեց ուտել, ասելով:

—Ինչ էլ որ լինի, Ֆրէդերիկ հայրիկ, մեծ բաւականութիւն պատճառեցիք ինձ ալդ միսիթարական նորութիւնը պատմելով:

Ութը ժամի մօտերքը նա գնաց մեր մօտից, խոստանալով մէկ կամ երկու օրից լետով վերադառնալ: Մենք հանգիստ պարկեցինք քննելու:

Ինչպէս նախընթաց գիշերը ցուրտ էր և ձանձրալի, նորն քան էլ ալս գիշերը հանդիսաւ էր. մենք քննեցինք ինչպէս բաղտաւոր մահկանացուներ, չնալաելով սաստիկ քամուն, որ փչում էր զուրսը, Ես թողի լուսահատութիւնս և մտածում էի, որ մնանք Գրառուֆտալում մինչև եղելութեանց վախճանը,

Գ.

Գրառուֆտալ առանձնանալով՝ մտածում էի, որ գերմանացիները հանգիստ կը թողնեն մեզ: Ել ինչ կարող էին խլել նոքա մեղանից, Ամեն բան թողել էինք և ապրում անտառում, մի փոքրիկ գիւղում, որ ամենից խղճուկն էր ամբողջ շրջակալքում: Կրքեմն ախուամենալիւ նոցա զինուորները փոքրիկ խմբերով գալիս էին մեր անկիւնը, ուր նոցա հաղիւ լաջողում էր քանի մի խուրձ խոտ կամ դարման թոցնել, Ամենը, ըստ իս, դէպի լաւն էր փոխուել, և մտածում էի, որ մեղ շրջապատող աղքատութեան շնորհիւ, ստիպուած չէինք լինի գործ ունենալ ալդ ամեն բան լափշտակող

ժողովրդի հետ, Բալց, տարաբաղտարար, լաճախ մարդ սխալ-
ուում է, ամեն ինչ ալնպէս չէ լինում աշխարհում, ինչպէս
մարդ ենթադրում է.

Լուր տարածուեց, թէ Դօնալիեն, կէրնը և անտառի
մեր պահապանները Վօգէզն անցել էին և կռուել գերմանացի-
ների հետ Բէլֆորի մօտ. Խօկոչն միտս եկաւ, որ Ժանը նոցա
օրինակին կհետեւէ: Յուս ունէի, որ Վարդ-Մարին չետ կպահի
նորան, բալց բոլորովին հաւատացած չէի ալս բանում: Այս
երկիւղը չէր հեռանում ինձանից:

Ամեն առաւօտ, երբ աղջիկս տնտեսութեամբ էր պարա-
պում, իսկ տատը համրիչն էր քաշում, ևս իջնում էի դահլիճը
ծխամորչ ծխելու ծերունի Խկէլի հետ, Կօֆֆէլը, Շտարկն և
ուրիշներ գալիս էին մի մի բաժակ օյլի խմելու: Խօսում էին
աների խուզարկութեան դէմ, զանգեր զարկելն արգելելու,
գերմանացի դպրոցական ուսուցիչների մերերին փոխարինելու,
զանազան հարկահանութիւնների մասին, որոնք օրէցօր աւե-
լանում էին, դժբաղա գլուզացիների մասին, որոնք ստիպուած
էին երկերը մշակել պղուսացիներին կերակրելու համար, և
հազարաւոր ուրիշ սարսափիների մասին, որոնք մեզ զինուորել
էին բաղէնցիների, բաւարացիների և վիւրտէմբէրդցիների
դէմ, որոնք իրանց կեանքը զանում էին Վլէնէլմ արքալի հա-
մար և կռում էին նորա փոխարէն ի վնաս իրանց խկական
շահերի:

Շտարկը, որ մի խիստ բարեպաշտ անձն էր և ոչ մի
կիւրակի պաշտամունքից չետ չէր մնում, գոչում էր, թէ բոլոր
գերմանացիք անողորմ կերպով դժոխաքում պիտի տանջուեն
լաւիտեանս լաւիտենից:

Ալսպէս էինք անցկացնում մեր ժամանակը:

Մի անգամ, Կիւլոտը մեզ մօտ բերեց իւր թոռն Ժան-
Բատիստին, մի բարձրահասակ 16 տարեկան պատանուն, քա-
թանէ վարտիկ և բաճկոն հագած, որ ամառ ձմեռ առանց գուլ-
պալի էր ման գալիս, հաստ մաշիկներով, որի մազերը երկալն
դեղին հիւսուածքներով կախուած էին երեսի վերակից, և մաք-
սանենդի պարկը նիւար մէջքից կախուած: Այս տղան՝ նստաց
կրակի մօտ և սկսեց պատմել, թէ Սարբրիւկէնի և Լանդաուի
մօտ զօրքերը սաստիկ զալրացած են և ամեն պանդոկներում
լսում է նոցա անէծքները անմիտ հասարակագետականների
դէմ, որոնք պատճառ էին պատերազմի շարունակուելուն Աէ-

դանից լետով, թէ կուլմիէի կողմնը, Օրլէանի մօտ կոխու ե-
զաւ, գերմանացիք փախան, և Ֆրիդրիխս-Կարլը շտապեց օդ-
նութիւն հասնել նոցա, բայց որ մեր ջանել նորակոչները ալ-
նուամնալին մտադիր են միանալ հասարակապետական դօ-
րաբանակին. թէ շրջանի կառավարիչը տարեկան 50 ֆրանկ
տուգանք դրեց երկրից փախչող կամաւորների ծնողների վի-
րալ,—թէ, սակալն, ալդ չէ արգելում նորան ժան Բատիստին,
հետեւ իւր ընկերներին հալրենիքը պաշտպանելու համար.

Երբ նա տւարտեց, եռ զեր բարձրացալ Վարդ-Մարիին
հաղորդելու ալս նորութիւնները՝ նա ինձ պատահեց սան-
դուխտներին, գնում էր լուսցատուն, և ամեննին չզարմացաւ
իմ հաղորդածների վերալ.

—Այս... ալք... հալրիկ,—ասաց նա.—ես ալդպէս էլ կար-
ծում էի, պէտք է ամենքն էլ մասնակցին պատերազմին. ա-
մենալետին տղամարդն անգամ պարտաւոր է գնալ ալդ զող
գերմանացիներին պատժելու.

Նորա անդորրութիւնը ինձ զարմացնում էր, վասն զի
նա անշուշտ պիտի մտածէր որ ժան Մէրլէնը—ալդ վատահ
մարդը—տանը չէր մնալ ալդպիսի վալրկենին և լանկարծ կա-
րող էր ճանապարհ ընկնել դէպ այնտեղ, չնակելով որ խոս-
տում էր տուել ամուսնանալ նորա հետ:

Աս մտքերով, մտալ նորա սենետկը, իսկ աղջիկս իջաւ
ներքեն. երկու րոպէից լետով սանդուխքներում լսուեց ժան
Մէրլէնի ոտնաձալնը:

Ի՞դ.

Նա ներս մտաւ հանդարտ, գլխարկն ուսին թեքած և
ուրախ-ուրախ ողջունեց ինձ.

—Բարս ձեզ, Ֆրէդերիկ հալրիկ, մենակ էք.

—Ան, ժան. Վարդ-Մարին իջաւ լուսցատունը: իսկ
տատը դեռ պառկած է:

—Հա. ալդպէս,—նկատեց նա և ձնոնափալտը դրեց
զրան ետև.

Նս վոքը ինչ բան գուշակեցի նորա կերպարանքից. Նա
անց ու դարձ էր անում սենակում, գլուխը կախ, և լանկարծ
կանգ առնելով՝ ասաց.

—Գիտէք ինչ է կատարւում Օրլէանի մօտ: Ֆրանսիան
սկսում է աղատում գերմանացին երից և ամեն կողմից հրա-

էք է կարդում կամաւորներին, Դուք Բնչ էք մտածում ալս-
մասին,

Իմ երեսս բորբոքուեց, և լուզուած պատասխանեցի.

—Լուարի միւս կողմը գտնուողների համար ալդ լարմար-
է. բայց մեղ, ալստեղ ապրողներիս ախֆան էլ հեշտ չէ հաս-
նել ախտեղ և դեռ պրուսացիներն էլ կարող են մեղ բռնել-
նոքա բոլոր ճանապարհները, շափղները պահում են:

—Ո՛չ!—ասաց նա, —նոցա աւելի վտանգաւոր ենք հա-
մարում, քան թէ իսկապէս ենս ևս գրադ կզամ, որ նոցա քթի
տակ իսկ անցնեմ Վօգէղը, Կէրնը, Դօնատիեն և ուրիշ շատեր-
շատ լաւ անցել են:

Ես իսկոյն հասկացալ, որ նա ուղում էր գնալ, որ ալս
որոշումը բոլորովին հասունացել էր նորա գլխում, հանգստու-
թիւնս վրդովուեց: «Եթէ նա գնալ, —մտածում էի, —Աստծուն-
է լալանի, թէ երբ զլուխ կզար հարսանիքը»: Վարդ-Մարիիտ
մասին մտածմունքը լուզում էր ինձ:

—Քարի գործ է, —ասացի նորան, —բայց պէտք է մտա-
ծել ծերերի մասին ևս, ժման: Ի՞նչ կատէ բարի պառաւ Մար-
գրէղէլը, եթէ մի ալսպիսի ժամանակ թողնէք նորան:

—Մարզս իսկական փրանսուհի է, ալս մասին ես խօսել
եմ հետը, պ. անտառապետ. նա համաձայն է:

Կռներս թուզացան, և չգիտէի թէ ինչ պատասխանեմ-
մի ըսպէից լետ նորան հարցրի:

—Իսկ Վարդ Մարին, Զէք մտածել Վարդ-Մարիի մասին:
Զէ որ դուք նշանուած էք .. Նա ձեր կինն է Աստծու առաջ:

—Վարդ-Մարին ես համաձայն է, —ասաց նա: —Միայն
ձեր հաճութիւնն է հարկաւոր. ասացէք. ալն. և ամեն բան-
վերջացած է: Աերջին անզամ, երբ ես ախտեղ էի, երբ մենք
ներքն ծխում էինք ձեր ծխամորչը, ես պարզիպարզու պատ-
մեցի Վարդ-Մարիին, թէ ինչպէս անպաշտօն անտառի պա-
հապանին մնում է մասնակցել պատերազմին. նա հասկացաւ
և համաձայնեց ինձ հետ:

Նորա խօսքերը զարհուրելի էին ինձ համար: Անկարելի
բան է: ասացի և լուսամուտը բանալով՝ ձախ տուի աղջկաւ-

—Վարդ-Մարի... Վարդ-Մարի... Ալստեղ արի... Ժանն-
ալստեղ էլ

Նա լուացք էր վուում պատնէշի վերալ, բայց իսկոյնք
գործը թողեց, ու բարձրացաւ մեղ մօտ:

—Վարդ-Մարի, —ասացի նորան, —ճշմարիտ է, որ դու համաձայն ես, որ ժան Մէրլէնը Թրլէան գնալ գերմանացիների դէմ կռուելու ծշմարիտ է: Ասեա առանց քաշուելու:

Նորա աչքերը փալատակեցին, դէմքը գունատուեց, և պատասխանեց.

—Արմ... Արդ նորա պարտքն է... պէտք է գնար, Մենք չպէտք է պրուսացիների և ուրիշնորի պէս վարուենք. նա պէտք է կռուէ մեր փոխարէն... Պէտք է տղամարդ լինել... Պէտք է հալրենիքը պաշտպանել:

Դժու արսպիսի ուրիշ շատ բան ասաց նա, ես ալեկոծուած լսում էի ու մտածում.

«Ի՞նչ փառաւոր աղջիկ ունիմ... Զէ, ես սորան կատարել պայէս չեմ ճանաչել մինչեւ ալժմ... Բրուատների արիւն կալ մէջը...»

Թւում էր թէ ծերունիները յարութիւն էին առել և խօսում էին երեխաների բերանով. Նոքա, կարծես, պահանջում էին, որ մենք պաշտպանենք ալն հանգստարանի հողը, ուր նոցա սոկուներն էին հանդզում:

Ես վեր կացակ բոլորովին գունատուած և ձեռներս դէպի նոցա մեկնեցի:

—Եկէք զրկեմ ձեզ, Դուք ճշմարիտ էք, որդիք, Արմ, իւրաքանչիւր ֆրանսիացու պարտքն է կռուելու գնալ: Ախ, երանի թէ տասը տարով միան փոքր լինէի. ես ես կգալի քեզ հետ, ժամն, և մենք եղբայր կլինէինք զէնքի կողմից:

Եւ երեքս զրկեցինք միմեանց:

իԵ.

Ես լաց էի լինում. խոստովանում էի, որ կարող եմ պարծենալ, արդպիսի աղնիւ ու փառաւոր դուսար ունենալով, որին ես ինքու մինչեւ ալժմ լաւ չէի ճանաչում: Ժանի և Վարդ-Մարիի որոշումը ինձ միանգամայն բնական էր թւում:

Լսուեցաւ տատի ոտնաձակնը, որ զալիս էր խարիսափելով և պատից բռնած. ես նշան արի, որ ամենքը լռեն, և երբ խեղճ պառաւը ներս եկաւ, ասացի նորան.

—Ճառի, պ. տեսուչը ժանին Նանսի է ուղարկում, պիտի ստիպուի մի առժամանակ մնալ ալնտեղ:

—Վասանդի չի ենթարկուի, —հարցրեց նա:

Ո՞չ տատի, անտառալին գործի լանձնարարութիւն է, պատերազմի չվերաբերող բոլորովին:

—Աւելի լաւ,—ասաց նայ Քանի քանի մարդիկ են վտանգւում հիմի... Որո՞նք նորանից հեռու են՝ բաղդաւոր պիտի համարեն իրանց:

Նա նստեց ու ըստ սովորականին սկսեց աղօթք մըրմընջալ:

Ել Բնչ պատմեմ քեզ, ծօրժ, այն ամենի մասին, որ ալղպէս սաստիկ լուղում էր իմ սիրաց:

Ժան Մէրլէնն ամբողջ օրը մեղ մօտ անցկացրեց: ՎարդՄարին մի համեղ ճաշ պատրաստեց, ինչքան որ հնարաւոր էր մեր կացութեան մէջ, նա ծածկեց իւր ամենալաւ գլխարկն և կապուտ մետաքսէ զլխի փաթըթելուն, որպէս զի աւելի դուր դալ իւր սիրած մարդուն:

Կարծես թէ դեռ աչքիս առաջն է նա, սեղանի առաջ նստած, տատի կողքին, և ժպտալիս իւր ամուսնուն, որ նըստած էր նորա հանդէպ:

Կարծես թէ դեռ լսում եմ ծանի զրոյցը Օրլէանի լաւ համբաւների, պատերազմի բաղդաւոր փոփոխութիւնների մասին. թէ ինչպէս տատը նիրուում է իւր բաղկաթուում, իսկ որդիքը նստած են նորա կողքին պատուանի մօտ, ձեռք ձեռքի տուած, սիրահարութիւն անելով միմեանց, և խօսակցելով ցած ձանով, և ուրախ խօսքերից դառնալով տխուրի ինչպէս արդ լաճակի պատահում է սիրահարներին:

Սո ման էի գալիս սենեակում, ծխամորչը բերանումս և ապագալի մասին մտածում: Լսում եմ պանդոկի դահլիճում տեղի ունեցած խօսակցութիւնը, լիշելով թէ ինչ վտանգ է սպառնում իւրաքանչիւրին, որ թողնում է երկիրը, և այն ամեն արգելքները, որ առաջ էին բերում գերմանացիք մեր զօրքերին միանալ ցանկացողներին, և ինձ սկսում է թուալ, թէ լսում եմ կօշիկների ճռառոյը և թրերի շաշիւնը: Իջնում և բաց եմ անում ծխախոտի ծխովլ լի դահլիճի դուռը, ուշադրութեամբ նալում ախտեղ, ապա նորից բարձրանում վերև, փոքր ինչ հանգստացած, և ասում ինքս ինձ, թէ պէտք չէ ամենեին վախենալ, որ երբեմն պատահում է աւելի դժուար ստիւններ անել, բայց որ եռանդուն մարդկանց ամեն ինչ լաջողում է:

Ալսպէս անցաւ բոլոր ժամանակը ճաշից լետոր:

Ըսթրիքից լետոր, որքան մօտենում էր բաժանուելու

բոպէն, ալնքան ծանր: Նեղութիւն էր գալիս ինձ վերայ և վերջապէս, մի տարօրինակ, անհասկանալի երկիւղ տիրեց ինձ:

—Գնացէք քնեցէք.—ասացի տատին.—արդէն ուշ է:
Բայց նա շմեց, որովհետեւ ականջը մի փոքր ծանրացել էր. նա ազօթք էր մրմնջում և մենք միմեանց նակելով, նշանացի էինք փոխանակում մեր մաքերը, Վերջապէս խեղճ պառաւը վեր կացաւ և երկու ձեռքերով բազկաթոռին լենուելով՝ ասաց մեղմ ձախով.

—Մնաք բարով, որդիք! Մօտ եկէք, ժամն, ուզում եմ ձեզ գրկել. Զգուշ կացէք պրուսացիներից... Նոքա խարերաներ են: Պահպանեցէք ձեզ... և թող Տէրը ձեզ օդնէ:

Եւ գրկեց նորան. Փանը, կարծես, զգացուած էր: Նրբ դուռը փակուեց ետեղից, իսկ եկեղեցու զանգն էլ ութ ժամը հնչեց և գրեթէ բոլորովին խաւար պատեց, նա ասաց.

—Վարդ-Մարի, ալֆմ ժամանակն է... Լուսինը դուրս եկաւ և արդէն լուսաւորում է ճանապարհը:

Նոքա գրկախառնուեցին և երկար անխօս կանգնած էին, վասն զի ներքնից օտար մարդկանց խօսելու և աղաղակի ձախներ էին լսում—կարող էին մեղ լսել, պէտք էր զգուշ լինել:

Զգիտես, Ժօրժ, և կամենում եմ որ երբէք չիմանաս, թէ ինչ է կրում հալրն ալովիսի րոպէներին:

Վերջապէս նոքա բաժանուեցան: Ժանը վերցրեց ձեռնախալու, Վարդ-Մարին, լուզմունքից դունասուած, ասաց նորան հաստատ ձախով.

—Մնաս բարեմաւ, ժամն:

Եւ նա, առանց պատասխան տալու, գրեթէ դուրս փախաւ սենեկից, ծանր շունչ քաշելով, կարծես թէ մի բան խեղդում էր նորան:

Ես հետեւեցի նորան:

Մենք իշանք նեղ ու մութ սանդուխքով և լուսնի ազօտ լուսով լուսաւորուած փողոցում գրկախառնուեցանք:

—Ոչինչ չես ուզում, —հարցրի նորան, մտածելով փոքրինչ դրամ տալ կարիք ժամանակի համար:

—Ո՞չ, ես ամեն բան ունիմ, ինչ որ պէտք է:

Սեղմեցինք միմեանց ձեռքը, անզօր միմեանցից բաժանուելու:

Ես զգում էի որ շրթունքներս դողում են, և ժանճ էլ գողդոջուն ձալով ասաց ինձ.

—Պէտք է քաջ լինել, հալրիկ, Մենք տղամարդ ենք.

Եւ արագ քալերով հեռացաւ ինձանից.

Նայեցի թէ ինչպէս ծածկուեցաւ նա գիշերուալ մութի մէջ, և մտքումս օրհնում էի նորան։ Ինձ թում էր, թէ ժալուի միւս կողմն անցնելիս, նա մի անգամ ևս դարձաւ դէպ ինձ և զլխարկը շարժեց։

Երբ լետ դարձալ, Վարդ-Մարին նստած էր աթոռի վերալ բաց պատուհանի առաջ և լաց էր լինում, երեսը ձեռքերով ծածկած։

Խեղճ երեխան մինչև վերջին գալրկեանը անվեհերութիւն էր պահպանել, բայց ալժմ նորա բոլոր վիշտը արտասուքով էր արտալարտում։

Ես ոշինչ չասացի և, փոքրիկ լամպարը թողնելով սեղանի վրալ, գնացի սենեակս։

Այս ամենը տեղի էր ունենում 1870 թուի նոյեմբերին, Առաջիկայում մեզ աւելի մեծ տանջանքներ էին սպասում։

Ի՞Զ.

Քանի մի օր անցաւ բոլորովին խաղաղ.

Օրէանից ոչինչ լուր չկար, Երբեմսապէս քաղաքում թնդանօթի ձախն էր լսում, թշնամին պատասխանում էր նոյնպիսի հրացանաձգութեամբ, և նորից ամեն ինչ դադարում էր։

Անձրեալին եղանակ սկսուեց, անձրեը հեղեղի պէս թափում էր. հալուող ձիւնը վարարում էր գետը. Ամեն մարդ աշխատում էր կրակի մօտից չնեռանալ, մտածելով բացակաների և պատերազմի մասին. Բիսմարկի ժանդարմները շարունակում էին իրանց պարտաւորութիւնները կատարել. նոքամիշտ երևում էին իրանց՝ անձրեսից թրջուած վերարկուներով։ Լռութիւնն ու անորոշութիւնը զարհուրելի ճնշում էին մեզ. Վարդ-Մարին աշխատում էր անխօս. երեմն միան, նկատելով, որ ես շատ տխուր եմ, աշխատում էր ժպտալ, բայց ես նորա մժգոյն երեսից տեսնում էի, թէ ինչպէս սաստիկ էր առանջում նա.

Արբեմն տատն ևս սկսում էր հարց ու փորձ անել Ժանի
մասին, Հանգստացնում էինք որքան կարող էինք, և նա լի-
շողութեան թուլութեան պատճառով շուտով մոռանում էր
ինչի մասին որ խօսում էր, և մեր պատասխաններով զոհա-
ցած՝ շնչում էր կարծես թէ երազում.

—Արդպէս... արդպէս.

Անհրաժեշտ աշխատանքները, ամենօրեալ գործերը, ա-
նասուններին ինսամելը, տնտեսութիւնը, —այս ամենը մեր ու-
շաղրութիւը հեռացնում էր մեր դժբաղդութիւններից:

Խեղճ կալասը, ալլ ևս գործ չունենալով մեզ մօտ, սկսեց
մաքսանենգութեամբ պարապել Պֆալցբուրգի և շրջակալքի
միջն, ամեն որ կեանքը վտանգի ենթարկելով, որպէս զի մի
քանի Փունտ ծխախոտ կամ ուրիշ որ և է մանր բան անցկաց-
նէ. լուր էր պտտում, թէ գերմանացի մի պահապան սպանել
է նորան. Ռատօն հետևեց նորան, և ախուհետե նոցա մասին
էլ ոչինչ չլսեցինք. Անշուշա վաղուց արդէն հանգչում էին
նոքա ուրիշիցէ անտառում եղինու տակ:

Մի առաւօտ, երբ մենք ներքն գահ լինումն էինք ծերու-
նի իշէլի հետ միախնակ, նա ասաց ինձ.

—Ֆրենքերիկ, ալստեղ արդէն գիտեն, որ ձեր փեսաց
Ժան Մէրլէնը, գնացել է, որ ազգալին գնդին միանալ. Զգուշ
կացէք, —պրուսացիները շատ չարութիւններ կարող են անել
ձեզ,

Ես ջախջախուած էի և մի րոպէից լետ պատասխանեցի.

—Ախալում էք, նկը հալրիկ. Ժանը գործով է գնացել
Դոզէնհալմի մօտ. Հին ապահովներն է ժողովում. ներկալումս
ամեն ոք պէտք ունի:

—Բահ, բահ, ալդ տեսակ բաներ ինձանից ծածկել չէք
կարող, —ես Բրուատի հին բարեկամն եմ. ձեր Մէրլէնը մի
քանի օրից չէ երեսում արդէն ձեզ մօտ. Նա անցել է լեռնե-
րը, և լաւ էլ արել է. շատ պատուական ջահիլ է. բայց դա-
անաններ բաւական շատ են մեղ մօտ. ձեր մասին տեղեկու-
թիւններ են տուել, զգուշացէք.

Այս խօսակցութիւնը սթավեցրեց ինձ. Ենթադրելով, որ
լաւ կլինէր նախազգուշացնել Մարգրէդէլին և հօրեղբար Դա-
նիէլին, ես նախաճաշից լետ, առանց Վարդ-Մարիին բան ա-
սելու՝ ձեռնափակու վերցրի և ուղևորուեցալ Յէլսրէգ:

Անձրմը դադարել էր. Զմեռուալ արեը լուսաւորում էր

անտառը, և ալս ուրախ տեսքը, մեր մուալլ անկիւնից լեռով, կարծես կենդանութիւն էր տալիս ինձ, զանապարհը լերան ստորոտում անցնում էր նոլն իսկ լեռնալին տան մօտից. հեռուից, տեսնելով հին ծանօթ տանիքը, ես անչափ լուղուեցաւ: Բոլոր վիշտակները լարութիւն առան իմ մէջ, և մըտքովս անցաւ մօտից նալել անակին:

Կարծում էի հոգիս կթեթեանալ, եթէ նալեմ ալն սենեկին, ուր մեր նախնիքն էին մեռել և որդիքս ծնուել, Սիրտս սաստիկ զարկում էր, և գնում էի արագաքալլ, երբ լանկարծ փոքրիկ կամրջին հասնելով, որ ձգուած էր երկու եղեամով ծածկուած ուռենու միջով, հիացած կանգ առար:

Անտառի գերմանացի պահապանը, կանաչ մահուղէ գըլ-խարկ ծածկած աքաղաղի փետուրներով զարդարուած, լախ-ճապակէ երկալն ծխամորչը բերանին և մեծ մեծ չէկ բեղերով, բաց լուսամտում թեք ընկած, հանդարտ ծխում էր, և ար-տաքուատ երեսում էր բոլորովին բաղդաւոր և իւր վիճակից գոյն մի անձ: Նա ժպտալով նարում էր երկու հաստաթուշ ե-րեխաներին, որոնք խաղում էին դուրսը, իսկ նորա ետեղ Ջրջուն, կարմրաթուշ գերմանուհին ուրախ ուրախ ձալն էր տալիս.

—Վիլհէլմ, Կարլ, եկէք ձեր իւզահացերը վերցրէք:

Արիւնը սառեց երակներումս:

Ինչ զարհութելի բան է ոտարական մարդ տեսնել նախ-նիքների տանը, ուր ապրել ես մինչև ծերութիւնդ և որտե-ղից, առանց մի լանցանք գործելու, արտաքսել են միայն նո-րա համար, որ ուրիշները անարդարութեամբ տիրապետեն օ-տարի սեպհականութեան և ձեզ դուրս են շպրտում:

Սարսափելի բան է:

Պահապանը գլուխը վեր քաշեց. ես վախեցալ, որ չտես-նէ ինձ և թագ կացար: Այս, թագ վացալ ուռենիների ետեւ, շտապելով առաջ գնալ և գողի պէս պահուելով: Ամաչում էի, թէ ալդ մարդը նկատէ, որ հին տէրը տեսնում է նորան իւր տանը, իւր սենեկում, իւր օջախի մօտ. թագ էի կենում նո-րա համար, որ գերմանացին կարող էր ծաղրել արտաքսուած էլզացու վերալ: Կարող էր զուարձանալ ինձանով, Բայց ալդ օրից ատելութիւնը, որ մինչև ալդ ժամանակ չէի զգացել, ծնուեց իմ սրտում: Ես ատում եմ ալն գերմանացիներին, ո-րոնք անխոռով լագենում են մեր աշխատանքի պտուղներով և

զեռ իրանց աղնիւ մարդիկ են համարում. ես արհամարհում
եմ նոցաւ.

Վերջապէս, գիլ ծառաստանով Ֆէլաբէրդ հասալ, շատ
վատ արամարդուած:

Խղճուկ գիւղը, աղքի ու ցեխի մէջ թաթախուած, ինձա-
նից ուրախ տեսք չունէր. ոչ մի կենդանի էակ չէր երևում
փողոցում, ուր արդէն բազմիցս անցել էին հարկահանները.

Երբ հասալ էին տանը, ուր զետեղուած էր դպրոցը, փոր-
ձեցի դուռը բանալ բալց փակ էր. Ականջ դրի... Ոչ մի շ-
շուկ, ոչ մի մանկական ձախն. Ներս նախցի մանր լուսամուտ-
ներից. գեղագրութեան օրինակները կախուած էին պատից,
բալց նստարանները դաշտարկ էին:

«Հօրեղբալր Դանիէլ» ձախն տուի ես և ներս նախցի ա-
ռաջին լարկի լուսամտից, որովհետեւ դուռը փակ էր:

Մի քանի վալրկենից Մարգրէդէլ տան միւս դուռը
բացուեց. զուրս եկաւ Դանիէլ հօրեղբալրը, մի ցածրիկ, աշ-
խորժ տղամարդ բրդէ հաստ բանկոնով բամբակի թասակ գըշ-
խին. և հարցրեց.

—Ո՞վ է!

Ես մօտ գնացի.

—Է՛, անտառապետ Ֆրէդերիկն է. Ներս եկէք.

—Ալ և անտեղ չէք բնակում,—հարցրի ես.

—Ո՛չ. երեք օր է դպրոցը փակուած է, —տիւրութեամբ
պատասխանեց նա.

Եւ էին տան ցածր սենեկում, չուղունէ փոքրիկ վառա-
րանի մօտ, ուր կաթսալի մէջ գետնտխնձոր էր եփ գալիս, ո-
րի գոլորշին մինչև առաստաղն էր բարձրանում, տեսալ Մար-
դրէդէլն, աթոռիկի վերակ նստած.

ԻԵ.

Մարգրէդէլն ըստ սովորականին արտաքուստ աշխորէ
էր երևում. նախկին ժայիտն անդամ չէր անհետացել երեսից:

—Ա՛—ասաց նա.—սորանից լաւ սենեակ չունինք հիւ-
րին ընդունելու... գերմանացիք ամեն տեղից քշում են մնզ...
շուտով չենք իմանալ, թէ ուր դիմենք... բալց ինչ արած,
գէթ ալստեղ նստիցէք, նստարանի վերակ, Ֆրէդերիկ հալրիկ,
և եթէ ախորժակ ունիք, միասին գետնախնձորով ճաշենք:

Նորա առուգութիւնն ու լաւաբամադրութիւնը, այն չըքաւորութեան մէջ, ինձ աւելի ես վրդովեց նոցա դէմ, որոնք ալս ամենի պատճառն էին. ես ալնպէս լուզուած էի, որ անկարող էի խօսել:

—Արդ Մարին և տատն առողջ են, —հարցրեց Մարգրէդէլը.

—Այս, Աստուծով ողորմութեամբ, բայց անհանդիսա ենք ժանի պատճառով. Պրուսացիները զիտեն, որ նա գնացել էներունի Իկէլը ասաց որ զգուշ լինիմ, և եկել եմ ձեզ նախազգուշացնելու:

—Պրուսացիներից ես ալնքան էլ չեմ վախենում, —ասաց նա, արհամարհանքով վեր քաշելով ուսերը: —Ա՛խ, Աստուծած, ինչ անիծուած ազդ են: Ժանը վաղուց է անցել լեռները. Եթէ նորան բանած լինէին, վաղուց կիմանալինք. Նոքա առիթ չէին փախցնի մեղ հաղորդելու ալդ նորութիւնը, ձեռքերը շփելով. բայց նա անցել է արդէն... նա քաջասիրտ ջահիլ է...

Եւ ծիծաղեց իւր անատամ բերանով:

—Ովքեր նոցա ձեռքն ընկնեն, էլ ծիծաղ չկատ նոցա համար... Նա անշուշտ միացել է արդէն մեր կամաւորների հետ... հրացանի ու ուռմբերի ձալները լւում են ալստեղից:

Խեղճ կնոջ, ինչպէս միշտ, ամեն ինչ վարդագոյն էր երեսում, և ես մտածում էի:

—Բայտաւորութիւնն է ալսպիսի բնութիւնը մարդու համար: Դանիէլ հօրեղբալը ման էր գալիս սենեակում. ասելով:

—Ինչ է՝ Ժանը գնացել է, ալդ աւազակները ուսումնարանու փակեցին, նոքա ոչ մի բանի համար չկարողացան ինձ կշտամբել և ոչ մի բացարութիւն չտուին ինձ. զպրոցը փակեցին, անիւս, անքան ժամանակ միախ տալով, որ կարասիտ դուրս աանեմ. Նոքա կասկածանքով էին նալում մեղ վերաբ և աղաղակում... «g'schwind!... g'schwind!...»: ¹⁾

—Այս, գոչեց Մարգրէդէլը, —նոքա խորամանկ են, երեսպաշտ են, հարուածում են առանց զգուշացնելու: Ասաւուած հետդ կծիծաղեն, կրակի մօտ նստած ինչպէս բարի մարդիկ զուրգուրում են երեխաներիդ արցունքն աչքերին, իսկ ապա լանկարծ նոցա դէմքի արտալալտութիւնը բոլորովին փոխառում է, և առանց ամենեւին կարեկցելու տանից դուրս են անում: Ա՛խ, բարի գերմանացիներ, ալժմլաւ ճանաչեցինք ալդ բարեմիտ-

¹⁾ Ծուռով, արագ.

ներին, Բալց միշտ չեն կարող ալդպէս հպարտանալ... Սպասեցք... մի փոքր սպասեցէք... երկինքն արդարադատ է, և ենք մերը լետ կստանանք... ժամանը կդաւ... կտեսնէք, Ֆրէզերի կ հարդիկ... կվերադառնանք անտառի տունը և հարսանիք կկատարնք... Ես գուշակում եմ... պէտք է միայն լուսն Աստծու վերալ դընել... Ալժմշարչարւում ենք մեր մեղքերի համար... Աստուած պրուսացիներին ինչպէս զէնք գործ ածեց մեղ պատմելու համար Բալց նոցա հերթն էլ կդաւ, մենք նոյնպէս կարշաւենք նոցա վերալ... Լտեսնեն, թէ ինչքան հաճելի բան է աւերուելը, կողոպտուելը, լախտակուելը, Զգուշացէք, Ամենքին հերթ կհասնի...

Նա ախնպէս համողուած էր խօսում, որ ինքս էլ սկսալ հաւատալ նորա ասածներին և մտածում էի.

«Ինչ որ սա պատմում է՝ բոլորն էլ հնարաւոր են... Ակն, վաղ թէ ուշ, արիտուրի ժամը կհասնի... Դուցէ լետ էլ կըստանանք էլզասը... Այս բոլոր գերմանացիք միմեանց չեն սիրում... Պէտք է միմիալն մի մեծ ճակատամարտում լաղթութիւն տանել, ախունեան բաւարացիք, հէսսէնցիք, վիւրտէմբէրգիք, սաքսոնացիք, հաննօվէրցիք,—ամեն մէկն իւր կողմը կը քաշէա...»

Բալց մինչև որ ալդ կհասնէր՝ մեր դրութիւնը շատ ողորմելի էր.

Մարգրէդէլն ասաց, որ նա ախնքան հաճար և գետնախնձոր ունի, որ բաւական է մինչև պատերազմի վերջը, և եթէ մի քանի սու ևս լինի աղի համար՝ էլ նոցա ուրիշ բան պէտք չէ.

Ուսուցիչ Դանիէլը շրթունքները սեղմած՝ նստած էր ընկղմած մտածմունքի մէջ.

Ցեղեկանալով, թէ ինչ վիճակի մէջ են գործերը ֆէլս-մերգում, ես հրաժեշտ տուի հին բարեկամների 11 ժամին մօտ, ամեն բարիք մաղմելով նոցա:

Ուղեցալ անտառի տնակիս մօտով անցնել, ուստի և ուղերդուեցալ Գրառքալի զաւիլարով և գնացի եղենուտով, զժութուար անցանելի տեղերում ձեռնափալտիս վերակ լենուած:

Ճանապարհի երկու երրորդ մասը անցնելուց ինտոկ հանդիպեցի ծեր Ուուպպին, որ մի անուղղակ գող էր, գունափափ խալաթ հագին, կտաւէ փողպատով, որ լախտի պէս ոլորուած էր նորա նիհար վզի շուրջ, և կացինը ձեռքին:

Նա աջ ու ձախ կտրտում էր ամեն բան ինչ որ հանդիպում էր, մեծ ճիշդերն էլ մանր եղանակներն էլ, և ամենը դիզում էր ճանապարհի վերալ, Նրբ ես գոռացի նորան:

—Միթէ գերմանացիներից չէք վախենում. Որուպպ:

Նա ծիծաղեց և իւր հին դլամարկը լետ քաշելով դէպի ծոծրակը, թեով քիթը սրբեց:

—Ա՛յ, անտառապետ,—ասաց նա ուրախաղէմ. գերմանացիք մենակ չեն գալիս անտառ... Նոքա միայն խմբերով են ման զալիս, առ ջեկց թնդանօթներ, շրջապատուած հեծելազօրով, միշտ մեծ ճանապարհներով, և այն էլ երբ մէկի դէմ տասն են լինում... Ալդ քաջերը իրանց կաշուից խիստ են զդուշանում... հէ... հէ... հէ...

Ես ինքս էլ ծիծաղեցի, որովհետեւ ճշմարիտ էր ասում:

Երբ անտառից դուրս եկալ և լեռան ստորոտում երևացին լարդէ տանիքներ, ամենից առաջ աչքիս ընկան փալլոն սաղաւարուներ ծերունի իկէլի պանդոկի առաջ. անթարթ նալելով՝ ես տեսալ որ նոցա շրջապատել են կանանց և տղամարդկանց բազմութիւն ձորձեր հագած, իկէլը կանգնած էր տան շէմքում և խօսում էր. Վարդ-Մարին կանգնած էր ախոռի դռներում, իսկ տատը—իւր փոքր լուսամտի մօտ ձեռքերը սարսափից վեր ամբարձած:

Ի՛Ե.

Ես սկսեցի վազել ամենայն ոլժով, զուշակելով, որ մի լուրջ բան է պատահել. ճանապարհը կարճելու համար նեղ վողոցից վազելով՝ ներս փախալ ախոռից ալն բոպէին, երբ մի մարդ դռներից դուրս էր քաշում մեր երկու կովը, եղջիւներից կապած:

Դա Բօկբէրգցի մի պահապան էր, Տուբակ անաւնով. Կարճահասակ, լախաթիկունք, սև մօրուքով. նորա գեղեցիկ զուստրները սպասունու պաշտօն էին վարում պրուսական կապիտանի մօտ, որ ապրում էր նոցա մօտ նոյն իսկ պատերազմի առաջին օրերից:

Ցեսնելով, որ ալդ անպիտանը կովերս տանում է, աղաղակեցի:

—Ի՞նչ ես անում, գող, իսկոյն կովերս թող, թէ չէ վիզը, կուորեմ:

իմ աղաղակի վերալ մօա վաղեցին մի լիսնապետ, իւր զինուորները, Իկէլը, և Վարդ-Մարին. տատն անգամ, պատէ-պատ հասել էր ախոռին, Վարդ-Մարին գոչեց.

—Հալրիկ, մեր կովերն ուզում են տանել,

իսկ տատը ողբալի ձախով ասաց.

—Աստուած իմ, ինչնվ պիտի ապրենք, Կովերը որ կորց-նենք՝ ապրուատի վերջին միջոցից կզրկուենք.

Իկէլը ցոլց տուց ինձ վերալ և ասաց.

—Տէրը սա է. Սորա կովերն են.

Յիսնապետը, բարձրահառակ, նիհար, պինդ հուպ տուած համազգեստով, զլուխը լետ զարձեց կարծես առանցքի վերալ լինէր և ուսի վերալից նաևց ինձ. նորա ստղաւարտի տակից երեսում էին ակնոցներ, չէկ ընչացքներն ու կեռ քիթը. նա բուի նման էր գլուխը շուռ տալիս, առանց իրանը շարժելու. զլուելի՛ կերպարանք:

Նեղ փողոցում ժողովուրդ խմբուց, և լիսնապետը գոչեց.

—Հեռացէք, Տասնապետ, քշեցէք դոցա. իսկ եթէ մէկը ընդդիմանալ, հրացանով զարկեցէք...

Ցեխի մէջ խոնուած ամրոխը, և լացող տատի աղաղակը զարհուրելի կերպարանք էին տալիս ալդ տեսարանին.

—Ալս կովերն ինձ զուր են գալիս և տանում եմ,—ասաց Տուրակ պահապանը լիսնապետին.—Կարող ենք ճանապարհ ընկնել.

—Կովերը միթէ ձերն են,—հարցրի նորան, զալրութից փալտս սղմելով.

—Ալդ իմ գործը չէ,—պատասխանեց նա կատարեալ աւազակի եղանակով, որ ոչ սիրտ ունի, ոչ խիղճ:—Ենձ իրաւունք է տուած շրջակալքի բոլոր կովերից ընտրել և իմնըի փոխարէն տանել, որ անպիտան Փալցբուրգիները տարան... Նս ալս ընտրեցի... շվէցարական կովեր են.., ես միշտ սիրել եմ ալս տեսակը:

—Բաց նվ իրաւունք տուաւ ալդ ընտրութիւնն անել.

—Գոչեցի ես:—Ո՞վ կարող է ուրիշի սեպհականութիւնը նուիրել.

—Կապիտանը, իմ բարեկամը,—պատասխանեց նա լըր-

բարար խոնարհելով.

Ամբոխի մէջ լսուեցան ծիծաղի և խօսակցութեան ձալ-ներ:

—Կապիտանը մեծահոգի մարդ է, նա լաւ է վարձա-
տրում իրան բաւականութիւն պատճառող մարդոց։

Բարկութիւնս բռնեց. երբ լիսնապետը հրամալեց զի-
նուուրներին, և պահապանը կավերս եղջիւրներից բռնեց, ա-
ղաղակեց սղեն, զեհո—ես գաղանի պէս լարձակուեցի նորա
վերալ, բայց ՎարդՄարին ձեռքիցս բռնեց և երկիւղով թա-
խաննում էր ինձ։

—Հմարիկ, թռչ տուր. կսպանեն քեզ... տատի մասին
մտածիր։

Շրթունքներս զողդողաց և աչքերս մթնեց, բայց մտա-
ծելով, որ դուստրս որբ կմնալ մի ալսպիսի զարհուրելի ժամա-
նակ, իսկ տատս սովից կմեռնի, —ալս մտածմունքն ինձ ոլժ
ներշնչեց բարկութիւնս զսպելու, և ես ալսքանը միակն ձալ-
նեցի։

—Գնամ, փնտչու, տար գողացածդ կովերը, բայց զգուշա-
ցիր աչքիս երևալուց։

Յիսնապետն ու զինուուրները չսելու տուին իմ խօսքե-
րը, իսկ տաղակ ծուրակը ծիծաղելով ասաց։

—Մեր խուզարկութիւնը ի զուր չանցաւ, լիսնապետ, —
անուամենախիւ պատուական կովեր գտանք։

Երևաց, որ նոքա բոլոր շէներն ու գիւղերը ման էին ե-
կել, տակն ու վրակ էին արեն բոլոր ախոռները, և ալս ան-
քաղդութիւնը մեղ էր բաժին ընկել։

ՎարդՄարին, տեսնելով խեղճ անաստաններին դուրս
տանելը, որոնք մեղ հետ մնուել էին անտառի տանը, չկարո-
ղացաւ արտասուքը զսպել, իսկ տատը, ձեռները բարձրացնե-
լով ալեղարդ գլխից վեր, զոչեց։

—Այժմ կորած ենք... կորանք բոլորովին... Սա վերջին
հարուածն է... Ո՞վ Աստուած, ինչ մեղքի համար է ալս բո-
լոր անբաղդութիւնները զալիս մեզ վերալ։

Ես ձեռքով պահած ունէի նորան, խնդրելով որ վեր կե-
նալ, բայց նա ասում էր.

—Ֆրէդերիկ, թռչ առւր գոնէ մի րոպէ ևս նախմ ալդ
բարի անաստաններին... Ո՛չ, խեղճ Բէլլօտ... խեղճ Բլանշէտ.
ձեզ ալլ ևս չեմ տեսնի։

Մի հոգեքաղ տեսարան էր, և ամբոխը ցրւում էր, գը-
լուխները լետ դարձնելով և ոլժ չունենալով ալ ևս նախել
գորա վերալ։

Ազնուամենալինք պէտք էր մեր խղճուկ սենեակները բարձրանալինք և մտածէինք մեր ցաւալի դրութեան մասին, ալժմ, երբ մեզ պէտք է հոգալ ապրուատի միջոցների մասին, վերջին միջոցն էլ խլեցին մեղանից:

—Գիտես, ծօրժ, թէ ինչ նշանակութիւն ունի կովը զիւղական կեանքում. ով կով ունի, նա և կաթ, խղ, խաճու ունի—և ամեն անհրաժեշտ բաները. մի կովը բաւական է մարդոն. երկուսը՝ դրեթէ հարստութիւն է. Մինչեւ այդ ժամանակ կարող էինք կաթնալին բոլոր արտազրութիւնները վաճառել և մի քանի ոռու ձեռք բերել. ալժմ մենք ամեն բան պէտք է գնէինք մի ակնպիսի սովալից ժամանակ, երբ թշրին պարարատանում էր ի հաշիւ մեր չքաւորութեան:

Զարհուրելի՛ ժամանակո... Սեր որդիքն ու թոռները եռակալել չեն կարող, թէ ինչ օրեր ենք քաշել:

Ի՞՛

Սեղ մնում էր միալն հինգ թէ վեց հազար քիլօ խոտ և գետնախնձոր.

Իկէլը, որ մեր բոլոր դժբաղութիւններին կարեկցութեամբ էր վերաբերում, ասաց ինձ միւնուն որը.

—Լսեցէք, անտառապետ, ինչ որ ես գուշակեցի՛ կատարուեց. Ալդ գերմանացիք չափաղանց կատաղած են ձեր դէմ նորա համար, որ մերժեցիք ծառալել նոցա, իսկ ձեր փեսան միացել է հասարակապետականների հետ... Եթէ նոքա ուղենալին ձեղ արտաքսել կամ սպանել, վաղուց որդէն կանէին, բայց նոքա ցանկանում են արդարադատ և մեծահոգի երնալ. ուստի և կողոպասու են ձեղ մինչեւ վերջին շապիկը, որպէս զի ստիպեն հեռանալու ձեր քարին կամքով։ ինչպէս ասում են իրանք։ Եթէ ինձ լսէք, կծախէք ձեր կերը, ապա թէ ոչ ալս օրերս կդան և ալն էլ կիլեն ձեղանից. նոցա տրամարանութեամբ, ով որ կով չունի, խոտ էլ պէտք չէ նորան։ Բայց խնդրում եմ ոչ ոքին չասէք, որ ես եմ խորհուրդ տուել.

Ես հասկացաւ, որ նա իրաւ էր ասում. միւս օրն և եթ սրահս մաքրեցի, Դասպարը, Դիդէրիկը, Խիւլօտը, Ժան—Ադամը, Շտարկը, ամեն հարևաններ եկան և մաս մաս վերցրին իմ պաշարը. ալսպիսով կարողացաւ մի քանի ֆրանկ ազատել. Շտարկը մինչեւ իսկ դիջաւ ինձ իւր ալծերից մէկը, որ մեջ

շատ պէտք էր. զոնէ տատը առաւօտ երեկոյ մի քիչ կաթ էր խմում, որ քիչ շատ պահպանում էր նորսան. բայց վերջին ցնցումները ալնպէս աղղեցին խեղճ պառաւի վերալ, որ նա տերեկի պէս դողում էր և անկողնից չէր վեր կենում, ալլ զօթք էր մրմնջում և իշում իւր ամուսին Բրուատին, իւր պապ Դիւշէնին և ալլ հին աղղականներին. Վարդ-Մարին թել էր մանում նորա կողքին, երկար ժամանակ մինչև կէս գիշեր նստած և լսելով նորա ողբն ու ծանր ախ քաշելը.

Ես մենակ նստած էի հարսան սենեկում ձիւնով լի լուսամուտի առաջ, ոսս ոտի վերալ դրած, հանգած ծխամորչը առամերումս, մտածելով ալն ճնշումների, լափշտակութիւնների և ըոլոր սարսափների մասին, որոնք պատահում էին մնաց վերջին ժամանակներս, և սկսեցի մինչև իսկ հուասոս կորցնել Աստծու վերալ. Առն, տխուր է ալսպէս մտածել, բայց իմ կրած կորուստներից ալն համոզմունքի եկալ, որ շատ մարդիկ ստիպւում են ոչխար, սագ և հնդունաւ ձեանալ որպէս կերտկուր զալլերին, աղուէսներին ու բազէներին, որպէս զի սսքա պարարտանան նոցա հաշուով. Զալրոլթս մինչև անգամ մտածել տուեց իսձ, որ մեր սուրբ կրօնը կեղծաւորների կողմից համարում էր մխիթարելու ալն լիմարներին, որոնք իրբն որս են ծառալում ուրիշներին.

Բայց ամենից վատն ալն էր, որ Ֆրանսիակից սկսել էին անմխիթար լուրեր հասնել մեղ:

Գերմանական գունդը, որ Աէէմից եկել էր իմ խոտը տանելու, սրահը զատարկ գտաւ. պրուսացիները սարսափելի կերպով զալրացան և հարցրին թէ ինչ է եղել իմ կերը. պատասխանեցի, թէ Տուրակ պահապանի կովերը բոլորը կերան:

Բարեկազմութար, ալծո Շատարկի մօտ էր,—ալլապէս ալս աւագիները անշուշտ ալն էլ կտանէին:

Անամօթները մտան պանդոկ և պատմեցին, թէ հասարակապետականները լաղթուած են և հազար զոհ են տուել պատերազմի դաշտում. թէ նոքա դուրս են քշուած Օրէանից և գերմանացիք հալածել են նոցա. ալս ամենը նոքա ծաղրելով ու մնապարծութեամբ են պատմել. Մենք չէինք հաւատում նոցա ասածների նոյն իսկ մի չորրորդ մասին, բայց նոցա ուրախ տրամադրութիւնը և արհամարհանքը, որով վերաբերում էին դէպի մեր զօրապետները խօսակցութեան մէջ,

մտածել էին տալիս, որ նոցա խօսքերում ճշմարտութեան նը-
շուլ կար.

Ճանից մենք ոչ նամակ ունէինք և ոչ որ և է համբաւ...
ի՞նչ էր եղել նա: Ես փախուստ էի տալիս նորա մասին Վարդ-
Մարիի հետ խօսելուց, նորա դժգուն դէմքից տեսնելով, որ
անորոշութիւնը նորան աւելի էր տանջում քան ինձ:

Դեկտեմբերին էր ալս, Մի քանի ժամանակից հրացանա-
ձգութիւնը դադարել էր Ֆալցրուրգում. Լուր էր պտտում, թէ
գիշերները երբեմն բոց էր ժալթքում ամրութիւններից. ա-
մենքը հետաքրքրում էին, թէ ինչ բան էր այն, Ապա իմա-
ցանք, որ վառող էին ալրում, հեծելազօրի գործիքները ոչնչա-
ցնում, վասն զի կենական պիտոքներն սպառուել էին, և
քաղաքը ստիպուած էր եղել շուտով անձնատուր լինել.

Այս դէպքը տեղի ունեցաւ դեկտեմբերի 13-ին, վեց ուրմ-
բակոծութիւնից ու հարիւր քսան օրուաւ պաշարումից լետոր.
Ֆալցրուրգի կէսը վլատակների տակ էր. մի ուրակոծութեան
ժամանակ, օգոստոսի 14-ին, ութը հաղար հինգ հարիւր ուրմբ
ընկաւ քաղաք. և խեղճերը, շրջականներից հապճէպով ժողո-
վուած ամենաշող ժամանակ, սոսկ խալաթներով և մաշիկնե-
րով, ամբողջ ձմեռը ամրութիւնների վերալ կոնկոռնած, ի
լրումն ալս ամենի, ամենախիստ սառնամանիքի ժամանակ
զինուրական գերիներ էին տարուած—ումանք Ռաշտադ. միւս-
ները Պրուսիա:

Այս նորութիւնը որ իմացանք՝ ամենքս լուսահատուե-
ցանք: Քանի զեռ ուրակոծութիւնը չէր դադարել Ֆալցրուր-
գում՝ զեռ լուսներս չէինք կորցրել. ժամանակ առ ժամանակ
մեզ սիրտ էինք տալիս և ասում.

«Ֆրանսիան տակաւին պաշտպանում է իրան»... Բալց
երք ամեն ինչ հանդարտեց, հասկացանք, որ գերմանացիք
տէր դարձան մեզ, և մենք ստիպուած ենք խիստ զգուշ լինել,
որպէս զի նոցա բարկութիւնը չհրաւիրենք մեզ վերալ:

Ալդ օրից, ծօրմ, մեր վիշտը սահման չունէր:

Ի լրումն տնբաղտութիւններին՝ տատի հիւանդութիւնը
զօրացաւ... Մի առաւօտ, երբ ես նորա սենեակը մտալ, Վարդ-
Մարին ցած ձախով ասաց ինձ.

—Հալրիկ, տատին շատ հիւանդ է... բոլորովին շնչասպառ
է լինում... լաւ կլինէր բժիշկ կանչէիր:

— Խսկոն կերթամ, գուցէ արդէն շատ ուշ ենք մտածել

ալդ մասին, Եւ չնալելով, որ ինձ համար շատ վիրաւորական էք տեսնել մեր ամրոցի հին պատերը թշնամու ձեռքին, վըճ-ռեցի գնալ ծալցըուրդ բժշկի ետևից:

Սաստիկ ցեխս էր և ամպերը ծածկել էին երկինքը. Դը-ժուարութեամբ բարձրացաւ ճանապարհի եղերքով. անտառից դուրս զալիս երեք քիլոմետր ինձանից հեռու փոքրիկ քաղաքը տեսալ. Սարսափելի տեսարան. Գաղաքը կարծես մոալլ երկնքի տակ ճիւլուած լինէր. գրեթէ բոլոր տներն ալրուած էին, եկեղեցին քանդուած, ամրացները քակուած մինչև նոյն խակ զետինը. Ես կանգ տուալ և լենուելով ձեռնափալտիս վերալ սկսեցի մտարերել նախկին երջանիկ օրերը:

Քանի անգամ, 25 տարուալ ընթացքում, եկել էի ալդ-տեղ կիւրակի և տօն օրերը իմ ամուսին կատէրինի և դստերս հետ պատարագին, կամ տօնավաճառ, կամ թէ հին բարեկամիս տեսնելու. այն ժամանակ մենք երջանիկ էինք, խնդում էինք և մտածում, որ ամեն ինչ նոյնպէս լաւ կընթանալ մին. չե կեանքներիս վերջը. Եւ ալդ ամեն ուրախութիւնները ան-ցան. ինձ թւում էր, որ տեսնում էի հին բարեկամներիս, ո-րոնք հրաւիրում էին մեզ իրանց պարտէզները հաղարճ կամ ծաղիկներ քաղելու. Քանի քանի լիշատակներ անցան իմ ոտքով...

Աչքերս մթնեցին, բայց ուշքի եկաչ և շարունակեցի ճա-նապարհս, ալսպէս միսիթարելով ինքս ինձ.

«Կեանքը կարճ է... Շուտով, Ֆրեդերիկ, ամեն ինչ կմո-ռացուի... Մի լուսահատուիր. երկար չես տանջուելու».

Ինձ թւում էր, թէ լսում եմ մեր ուրախ փողհարների ձախը. բայց բակի գուանը գերմանական պահապանն և հեր-թապահը, սաղաւարտով և հրացանն ուսին, ստիպեց ինձ սթափուել.

Իմ հին բարեկամ թումը, որ քաղաքի կողմից նշանակուած էր մաքսալին տուրք ժողովով, ներս հրաւիրեց ինձ: Խօ-սեցինք մեր գժբաղդութեանց մասին. տեսնելով, որ ես նա-յում էի, թէ ինչպէս են պրուսացիները կամուրջից անցնում, նա ասաց.

—Մի նալէք նոցա, Ֆրեդերիկ,—նոքա հպարտանում են, երբ նալում էք իրանց վերակ, երևակալելով, որ բերկում էք նոցանով.

Սս շուռ եկալ և մի քանի րոպէ հանգստանալուց լիտոյ՝
մտալ քաղաք:

Լ.

Նկարագրեմ քեզ խղճուկ Ֆալքրուրդի լքեալ տեսքը, որ
երբեմն մաքուր էր, գեղեցիկ տներով ու մեծամեծ հրապա-
րակներով զարդարուն, որոնք այնքան կենդանի էին զօրա-
խաղերի ժամանակ: Խօսմմ ալդ տների մասին, որոնք ծռուած
երեսում էին մէկմէկու վերալ, խողովակներով, դուրս ցցուած
աւերակների մէջ, գերմանացիներով լի, որոնք ուտում էին,
խմում և ուրախանում, մինչդեռ մենք նիհարած կերպարանք-
ներով և շփոթուած տեսքսվ, պատառուուած, վերջն անլա-
ջողութիւնների շնորհիւ, նալում էինք, թէ ինչպէս անամօթ-
ները քէֆ էին անում մեր փողերով: Սոսկ մտածմունքն ալդ
մասին սիրաս արիւնով լցուում էր:

Մօտենալով հանդիսի-հրապարակի անկիւնին, եկեղեցու
հանդէպ, լսեցի մի կոպիտ ձախ, որ գոռում էր քաղաքալին
անից:

—Էցրասսե!

Օրապահ լիսնապետն էր հրաման արձակում զինուորնե.
Րին որ դուրս գան: Դուրս եկաւ հերթապահ սպան, նորա ե-
տենից դուրս եկան ուրիշները պահականոցից և հերթով շա-
րուցան. տասներկու ժամն էր:

Ես սրտաբեկ կանգ առակ Վաշէրօն սլճատան դռանը.
Թշուառների բազմութիւնը, առանց ապաստանի, աշխատան-
քի և հացի, թափառում էր փողոցում, ջանալով ձեռքը ձեռ-
քի հետ զրպանը կոփել որքան կարելի է խորը, տաքանալու
համար. իսկ ես, թովմի պատմածից լսած լինելով, որ զի-
նուորական հիւանդանոցը և զպրոցը հիւանդներով լիքն են,
հարց ու փորձ արի թէ չէ կարող արդեօք ով և իցէ ցուց
տալ ինձ մի բժիշկ, որ համաձալն էր Դրաուֆտալ գալ իսկէ
մեռնող պառաւիս ուոտ:

Վիշտն ու երկիւղը տիրել էին ինձ. չգիտէի ում դիմեմ
և ինչ անեմ, երբ ետենից մի ծանօթ ձախ լսեցի՝ իմ հին բա-
րեկամ Յակոբ Բառւրի, որ առաջին ձկնորսն էր ամբողջ Հով-
տի մէջ:

—Ա՛, դուք էք, Ֆրէդերիկ հալրիկ. Դուք դեռ կենդա-
նի էք.

Նա ձեռքը մնկնեց ինձ և երեսում էր՝ ալնքան էր ու-
րախացել ինձ տեսնելու վերալ, որ ես լուզուեցալ:

—Այս, —պատասխանեցի ես.—ողջ մնացինք Աստուծով...
Այժմ երբ մէկին հանդիպում ես, մտածում ես, որ մնուեներից
լորութիւն արածին ես տեսնում: Դժբաղդաբար, տառը շատ
հիւանդ է, և չգիտեմ ալս աւերածուիքի մէջ ուր գտնեմ բժիշկ:

Բառուը խորհուրդ տուեց բժիշկ Սէմպէրլէնին դիմել, որ
ընակլում էր Վաշինգոն սրճատան առաջնուն լարկում, լանձնա-
րաբելով որպէս հմուտ և մարդասէր անձի, որ չէր մերժի ինձ
հետ գալ, չնակելով տեղի հնուաւորութեան և շտապ գործին,
որով նա պաշարուած էր քաղաքում:

Ես բարձրացալ, բժիշկ Սէմպէրլէնը ճաշի էր նստում և
խոստացաւ ճաշից իստ անմիջապէս գալ:

Փոքր ինչ հանգստացած՝ ներս մոտակ սրճատան մեծ
դահլիճը, մի կտոր հաց ուտելու և մի զաւաթ գինի խմելու
մինչև որ ուղեկիցս կդար:

Դահլիճը ամբոխով լիքն էր. դոքա էին համազգեստ հա-
զած հաստափոր բուրժուաներ, գարեջրարարներ, ճարտարա-
պետներ, ագարակահերեր, դրամատան տէրեր, հիւրանոց պա-
հողներ, սեղանապետներ, որոնք եկել էին երկիրը բռնելու,
պրուսական կառավարիչների ղեկավարութեան ներքոյ, որոնք
խաղում էին նոյց հետ ինչպէս խաղալիքների հետ:

Բոլորի զրպանները փողով լիքն էր, և խիստ կարգա-
պահութեան անախորժութիւնը մոռանալու համար՝ ալնքան
ապիստեղէն էին սպառում, ինչքան որ կարող էին տեղառ-
րել ստամոքոներում: Ոմանք շամպան էին խմում, միւսները՝
գարեջուր, ալլք՝ բուրդօնեան գինի, իւրաքանչիւրն իւր մի-
ջոցների համեմատ, բաց ոչ մէկը ընկերին չէր հիւրասիրում,
—ալդպիսի սովորութիւն նոքա չունին. ուստում էին երկու
ձեռքով, բերանը մինչև ականջները բանալով և քիթը ափսէի
մէջ կոխած. որովհետեւ անձրև օր էր և ցեխու և լուսա-
մուտներս բանալու հնար չկար, ուստի երրեմն ստիպուած էին
փողոց դուրս գալ մաքուր օդ չնչելու, վասն զի գտնիմում
անտանելի խեղդող օդ էր:

Ես նստակ անկիւնում իմ գինու գաւաթով և նալում էի
դէպի առաստաղ բարձրացող ծխի քուլաներին, և ալցելունե-
րին սպաւաւորող սպասուհիներին Մտածում էի հիւանդ տա-
տիս և աւերակների մասին. ականջ դնելով գերմանացիների

խօսակցութեան, որոնք էլզասցիներից անհամեմատ լաւ բարբառով էին խօսում, ես բան չէի հասկանում. դանչիճի միւս ծալրին մի քանի Փալցըուրդցիներ քննում էին այն լանձնաժողովի ինպիրը, որ միտք կար կազմակերպել քաղաքալին վարչութեան կից չքաւորներին արժան կերակուր մատակարարելու, նոյնպէս և պրուսացիների խոստման մասին պաշարումից բոլոր մնացուածների վարձատրութեան վերաբերմամբ, որին սակայն ոչ ոք չէր հաւատում.

Ժամանակը զանդաղ էր անցնում, Խորասուզուած Անելով ձախորդութիւններիս մասին մտածմունքների մէջ՝ զսեցի, թէ ինչպէս լանկարծ մի բարձր և կոպիտ ձախն խոհերից հանեց ինձ. գլուխս վեր քաշեցի և տեսալ Բօկբէրգցի պահպան Ցուրակին, որ խառնուել էր Փալցըուրդցիների խօսակցութեան մէջ և խոշոր բառնցքով զարկելով սեղանին՝ լըրբար գոռում էր.

— Զեզ, քաղաքի բնակիչներիդ համար լաւ է պատերազմի բերած դժբաղսութիւնների մասին մտածելու, Գուք ձեր ամրութիւնների ետև էիք պահուած և բօմբի առաջին սուլոցը լսելիս փախչում էիք ստորերկրեալ տեղեր թաքչելու Ձեզանից ոչ ոք բան չունէր կորցնելու, Նոքա, որոնց աներն ալրուած են, իրանց կալքի արմէքից վեր վարձատրութիւն կատանան. Հին, որդնակեր կարասիի փոխարէն նորը կարուի, և շատերը, որոնք մինչև պատերազմը ոչինչ չունէին, ձեռները կզիեն բաւականութիւնից և փորերը կհաստացնեն ու կասեն պատերազմն ինձ օգնեց կատարեալ բուրժուա դառնալու. ես պարտքս հատուցի և դեռ լաւ մարդիկ ես համարուեցալ, միայն նորա համար, որ գնդակը պատահարար իմ նկուղն ընկառա Ես մինչև վերջ նուիրուած կլինիմ իմ երկրին, կմնամ և լստեղ և լստեղից գաղթել ցանկացողներից կալուած կդնեմ, որովհետև նոքա ստիպուած կլինին ամեն ինչ գրեթէ ձրի տալ. Նոցա կվճարեմ այն փողից, որ կստանամ կորցրածիս փոխարէն։ Այս, այս կողմից պատերազմը առանձին անախօրժութիւններ չէ պատճառում և ամրոցի հաստ պատերի ետև կարելի է լինում հանգիստ նստել. Այն ինչ մենք, խեղճ գիւղացիքս ստիպուած էինք թշնամիներին կերակրել, նոցա մեղ մօտ տեղաւորել, խոտ, դարման, գարի, վարսակ, ցորեն տալ նոցա և ամեն ինչ մինչև վերջին կովը—մեր ապրուստի միակ միջոցը. Նոյն իսկ ինձանից երկու կով տարան—ովկա-

բող է ինձ վարձատրել. Ում դիմում ես իմ գանգատներով...
Այս արդէն չափազանց աներեսութիւն էր. Այդ անպիտանի աներեսութիւնը այն աստիճան վրդովեց ինձ, որ էլ չկարողացալ ինձ զսպել և ձայն տուի նորան.

—Դեռ համարձակւում էլ ես, անպիտան, պարծենալ քո վարմունքով մեր դժբաղտութիւններից լետու... Աւելի լաւ է որ պատմես, թէ լետոյ ինչ արիր և ինչպիսի օրինակ տուիր աղջկադ... Պատմիր բոլոր ներկալ եղողներին, թէ ինչպէս վազվեցիր ամբողջ երկիրը գերմանական պահապան զօրքի հետ, որով իրաւոնք էիր համարում ամբողջ երկրի անասուններից լաւագոյն կովերն ընտրել, քո թշուառ կովերի փոխարէն. պատմիր, թէ ինչպէս գողացար իմ շվէլցարական կովերը... Եւ դեռ համարձակւում ես գանգատուել և այնպիսի արձանաւոր մարդկանց ստորացնել, որոնք աղնւութեամբ կատարում են իրանց պարտքը.

Գանի խօսքս առաջ էի տանում, կատարելապէս հաւատացած, որ այդ մարդն էր պատճառ տատիս հիւանդութեան, այնքան աւելի խիստ էր ըռնում բարկութիւնս. աշխատում ինձ զսպել, բայց ուժից վեր էր, և լանկարծ ձեռնափալաս երկու ձեռքով բռնելով՝ մօտ վազեցի նորան որ խփեմ:

Բարեբաղտաբար, հացթուիր Ֆիկսարին, որ նստած էր այն անպիտանի մօտ, աթոռը դէմ դրեց իմ հարուածին ու ասաց.

—Ֆրեդերիկ հալրիկ, ուշքի եկէք.

Մեր ընդհարումը սարսափելի տպաւորութիւն դործեց. Բոլոր ներկալ գտնուողները խռնուեցան որ մեզ բաժաննեն, իսկ աւազակը, ամենքի ետեր կանգնած և բռունցքը վեր քած՝ գոչում էր.

—Ա՛, անպիտան ծեր, կտուժես սորա համար .. Գերմանացիք չկամեցան քեզ իրանց մօտ վերցնել... պարոն ֆօրստմէլստը արտաքսեց քեզ... երբ զու պաշտօն խնդրեցիր... ալժմ վիրաւորուած զրպարտում ես ազնիւ մարդկանց. բայց սուտ ես խօսում, էլի կը հանդիպես ինձ,

Այսպիսի ստոր ստախօսութիւնը կատաղութեան հասցրեց ինձ, հինգ թէ վեց մարդ ինձ բռնեցին, որ չարձակուեմ նորա վերաւ.

Ամեն բան ջարդ ու փշուր կանէի, եթէ պահնորդները

օգնութիւն չկանչէին պահապան զօրքին, որ ալդ միջոցին շրջագալում էր ալդտեղ:

Երբ դրան մօտ հրացանների շաշիւն լսեցի և լուսամուտաներում տեսալ սաղաւարտներ, սթափուեցալ, տեղս նստեցի—և ամեն ինչ հանդարտուեցի Տամապետը ներս մտտւ. տիկին վաշէրօնը, որ նստած էր սեղանի ետե, մի բաժակ դինի առաջարկեց նորան. և հէնց որ աղմուկը զաղարեց, նա գինին խմեց, բեղերը սրբեց, զլուխ տուեց և զուրս դնաց. Տուբակն ու ես, հեռուից զալրագին նալում էինք միմեանց. Նա հասկանում էր, որ ալդ դէպքի լուրը կտարածուի ողջ քաղաքում, և ալս բանից նա տրաքում էր:

Ես ես մտածում էի. «Թէ մի կպատահես ինձ Բիգէլբէր. զի ճանապարհին—ես քեզ հետ հաշիւս կտեսնեմ և տատիս վրէժն էլ լուծած կլինեմ»:

Նորա զլիսով էլ կարծես նորնպիսի մտքեր էին անցնում, վկան զի նա շարունակ նալում էր ինձ աշքի տակից գարշելի ժպիտով. Ալդ ժամանակ զոներում երեաց բժիշկ Սէմպէրլէնը և ինձ կանչեց. Նա խկոլն գուրս գնացի, գաւաթ գինուս փողը վճարեցի և ուղի ընկանք դէսլի Գրառուֆտալ:

ԼԱ.

Ինքդ գիտես, Ժօրժ, թէ ինչպէս վատ եղանակը աւելացնում է մարդուս վատ տրամադրութիւնը. Անձրեւ բարակ մազում էր. Մենք անխօս գնում էինք բժիշկ Սէմպէրլէնի հետ, պտտելով տղմուտը, որի մէջ կարելի էր մինչև ծնկները թաթախուել:

Բիգէլբէրգի միւս երեսից անտառ էր սկսում, և ճանապարհն աւելի լաւ էր. բժշկին պատմեցի օրէրֆէլսարի արած առաջարկութեան և ալն մասին, որ անտառալին բոլոր պահապանները, բացի Յակոբ Խէպալից, հրաժարուեցան. որ մենք արդէն տեղափոխուեցանք անտառի տնից պանդրկապետ Կէլլի մօտ և բնակւում ենք մի ցուրտ ու մութ անկիւնում, ուր տատը վեց ամսից ի վեր սկսել է ծանր հազով խեղուել. Նա զլուխը կախ լսում էր, և երբ խօսքս վերջացրի՝ պատասխանեց, թէ ի հարկէ ծանր է որ մարդ բաժանուի իւր տնից, հողից, մարգից և իւր ձեռքով տնկած ծառերից. բայց հարկ չկատ նահանջել ալդ ամենի առաջ. և որ ինքն էլ ստիպուած

